258 Հզոր Աստված խաղաղության, սքանչելի՛ Տեր Հիսուս,

1. Հզոր Աստված խաղաղության, սքանչելի՛ Տեր Հիսուս,
Դու՝ պատվավոր Խորհրդական, Հայր սիրո և գթության:
Այցելի՛ր ինձ, որ բորբոքվեմ Հոգուդ կրակով անշեջ,
Իմ գնացքը Դու հաստատի՛ր Քո ոսկեձույլ խոսքի մեջ:

2. Դու ես Աստվածն Աբրահամի, Իսահակի, Հակոբի,
Նաև՝ կանչված այն ընտրյալի, ով սրտանց Քեզ կպաշտի:
Թույլ տուր, Հիսո՛ւս, Հայր երկնային, որ փարվեմ ես Քո կրծքին,
Քեզ հետ ձուլվեմ և վայելեմ Քո սերը աստվածային:

3. Լա՛յն բաց արա իմ աչքերը, որ հրաշքներդ տեսնեմ,
Վստահաբար, հաստատակամ Քո հետևից միշտ քայլեմ:
Տե՛ր, ողորմի՛ր, որ Գառնուկի խնջույքին ներկա լինեմ,
Սուրբ անունդ իմ շուրթերին՝ երգեմ ու փառաբանեմ: